

– Բարկություն լաւ բան չէ, շարունակեց հանդարտ ծիծաղով, եւ առանցակնածութեան Տիկնոջ բազմոցին վրայ՝ նորա քով նստելով: Կը ներես,– կ'ըսեր,– եթէ երրորդ դուռն է, որ այս գիշեր բռնի անցնելու կը պարտաւորվիմ. յանցանքը իմն չէ, վասնզի միշտ այնպէս սովորած եմ, որ դուռները բանան. եթէ քու սովորութիւնդ է, որ դուռը չի բանաս պէտք է ամուր շինել տաս, եւ ոչ փտած ծիւնեաց վրայ հաստատես դռներն, որ առջի հարուածին կը բացուին:

Իսկ կիսը քաշուած բազմոցին մէկ անկիւնը, ոչ ձայն կը հաներ եւ ոչ պատասխան կ'իւտար:

– Բայց վերջապէս,– ըսաւ Գուրգէն,– դու որ լեզու կը պահես, ազատ ես ինձ հետ խօսելու կամ չի խօսելու, այլ ոչ իմ պահանջմունքս չի կատարելու. ո՞ր եմ այդ չորս փոքրիկ աղջիկները,– եւ դառնալով աղջկանց,– ո՞վ որ հայ է թող սա կողմն անցնի,– ըսաւ:

Փոխանակ վեց հոգուոյ ինը աղջիկ զատուեցան եւ մէկ կողմը շարուեցան: Գուրգէն կը զարմանար, վասնզի վեց հոգի միայն գիտեր հայ, իսկ հիմա երեք հոգի անելի կը տեսներ: Դարձաւ այն ատեն կնոջը.

– Կ'երեւայ, որ եթէ ես ազատութիւն խոստանամ տայս խեղճերուն՝ ոչ ոք քու քովդ պիտի մնայ գաւաթ մը ջուր տալու քեզի.– եւ տեսնելով բարձին վրայ սոսկալի արջառաջիլ խարազանը՝ եւ ձեռքն ամնելով ու շարժելով,– ի՛նչ Գեղեցիկ գործիք կրթութեան եւ հաւատքի բարոգութեան. դու շատ կը գործածէիր այս, Տիկին, այնպէս չէ՞...

Իսկ կինը արձան էր լռութեան. ոչ կը խոսեր, ոչ ձայն կը հաներ:

– Տղա՛ք,– ըսաւ Գուրգէն,– նայեցէք, ի՛նչ որ գտնեք՝ ձի, էշ, ջորի Տիկնոջ ախոռներումէ մէջ պատրաստեցէք, որ այս խեղճ աղջիկները իրենց տեղերը դարձնենք. շո՛ւտ ըրէք, շարժեցէք, անօթի շարդուեցանք: Ընտրեալք եւք, Տիկինը մեզի հաց, կերակուր դրկած էր, բայց ո՛յ գիտէ թէ իր օրինած աղը մէջը խառնած չէր: